

ԵՐԵՎԱՆԵՐԻ ՄՈՏ ԱԾԻ ՀՈՐՄՈՆԻ ԱՆՔԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎՈԼԵՎՈՂԶ Ն.Ն.^{1,2}, ՄԱՐԿՈՍՅԱՆ Ռ.Լ.^{3,4}

¹ Մոսկվայի Ի.Ս. Սեչենովի անվ. պետական առաջին բժշկական համալսարանի մանկաբուժական ֆակուլտետի Էնդոկրինոլոգիայի և դիաբետոլոգիայի ամբիոն, Մոսկվա, ՌԴ

² Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Էնդոկրինոլոգիայի գիտական կենտրոն, Մոսկվա, ՌԴ

³ Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան Էնդոկրինոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

⁴ Երևանի Մուրացան համալսարանական հիվանդանոց, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 2/18/2013թ., ընդունված է՝ 5/14/2013թ.

Հասակը հանդիսանում է երեխայի առողջության և բարեկեցության ամենակարևոր ցուցանիշներից մեկը, որն արձագանքում է երեխայի օրգանիզմում տեղի ունեցող բոլոր պաթոլոգիական պրոցեսներին: Ցածրահասակության պատճառներից մեկը կարող է լինել սոմատոտրոպ հորմոնի անբավարարությունը: Սոմատոտրոպ հորմոնի անբավարարության տարածվածությունը երեխաները մոտ կազմում է 1:10000:

Տարբերում են սոմատոտրոպ հորմոնի տոտալ (ամբողջական) և պարզիալ (մասնակի) անբավարարություն՝ մեկուսացված և համակցված ադենոհիպոֆիզի այլ տրոպ հորմոնների անբավարարության հետ (ադենոհիպոֆիզի հորմոնների բազմակի անբավարարություն՝ ԱՀԲԱ), բնածին և ձեռք բերովի, իդիոպաթիկ և օրգանական:

Աճի հորմոնի անբավարարության կլինիկական արտահայտությունները որոշվում են հորմոնի անբավարարության աստիճանով, հիվանդության ի հայտ գալու տարիքով, ինչպես նաև հիպոֆիզի այլ տրոպ հորմոնների ֆունկցիայի խանգարման աստիճանով:

Ճնվելիս այս երեխաները քաշով և հասակով չեն տարբերվում առողջ նորածիններից, սակայն նրանց դեպքում ավելի երկար է տևում ֆիզիոլոգիական դեղնախտը և հիպոգլիկեմիան: Առաջին նշանները ի հայտ են գալիս 2-3 տարեկանում: Հայտնաբերվում է ոսկրային և անձնագրային տարիքների անհամապատասխանություն:

Այս հիվանդների բուժման բացակայության դեպքում վերջնական հասակը կազմում է 120-130 սմ:

Սկսած 1958 թվականից աճի հորմոնի անբավարարության ժամանակ բուժման նպատակով օգտագործել են աճի հորմոն՝ ստացված դիակների հիպոֆիզի էքստրակտներից: Սակայն այդ ճանապարհով ստացված աճի հորմոնի օգտագործման ժամանակ մեծ թվով հիվանդների մոտ առաջացավ մահացու հիվանդություն՝ Կրեյտինեմիա- Յակոբի հիվանդություն: Սկսած 1985 թվականից այս ճանապարհով ստացված աճի հորմոնի օգտագործումն արգելված է:

Գենային ինժեներիայի մեթոդով ստացված ռեկոմբինանտային աճի հորմոնը կատարեց իսկական հեղափոխություն՝ այս հիվանդներին բուժելու նպատակով: Ներկայումս մեծ է այն հիվանդությունների ցանկը, որոնց ժամանակ բուժման նպատակով օգտագործվում է ռեկոմբինանտային աճի հորմոնը: